# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

# ՀՈՒՆԳԱՐԻԱ




IOM • OIM

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀՈՒՆԳԱՐԻԱ

IOM • OIM

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

ՄՄԿ

Սույն ուղեցույցը հրատարակվել է Իտալիայի Կառավարության ֆինանսավորմամբ:

© **Հեղինակային իրավունքը պաշտպանված է:** Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հրատարակչի նախնական գրավոր թույլատվության:

*****

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՄԿ-ի կամ նրա անդամ-պետությունների պաշտոնական տեսակետների հետ:

*****

**Հրատարակիչ՝** Միգրացիայի միջազգային կազմակերպություն

**Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)**
**Հայաստանյան առաքելություն**
Հայաստան • Երևան 0010 • ՄԱԿ-ի գրասենյակ
• Պետրոս Ադամյան փողոց 14, 1-ին հարկ
**Հեռ.՝** (+374 10) 58 56 92 • 58 37 86 • **Հեռապատճեն՝** (+374 10) 54 33 65
• **Էլ.փոստ՝** iom@arminco.com • http://www.iom.int/armenia

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մուտքի ընդհանուր պայմանները
և տեղեկություններ վիզայի վերաբերյալ ............................... 5
2. Ներգաղթ աշխատանքի նպատակով ................................ 7
3. Ներգաղթ ուսանելու նպատակով ..................................... 8
4. Կացության թույլտվությունը և հասցեաքարտը .............. 14
5. Ապաստանի ընթացակարգ ............................................ 17
6. Ընտանիքի վերամիավորում .......................................... 19
7. Առողջապահության համակարգ ..................................... 19
8. Սոցիալական ապահովագրության համակարգ.............. 21
9. Բնակարաններ............................................................... 22
10. Միգրանտներին առաջարկվող աջակցության
ծառայություններ ............................................................... 23
11. Քաղաքացիության/հպատակության ձեռք բերում ........ 25

# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀՈՒՆԳԱՐԻԱ

## 1. Մուտքի ընդհանուր պայմանները և տեղեկություններ վիզայի վերաբերյալ

Մուտքի և վիզայի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ կարող եք գտնել հետևյալ կայքում՝
http://www.mfa.gov.hu/kum/en/bal/consular_services/Entry_of_Foreiners_to_Hungary/how_to_apply_for_visa/
Դեսպանությունների և հյուպատոսությունների ցանկը կարող եք գտնել հետևյալ կայքում՝
http://www.kulugyminiszterium.hu/kum/en/bal/missions/missions_abroad/
Կարևոր տեղեկություն Հունգարիայի Շենգենյան անդամության վերաբերյալ՝
2007թ. դեկտեմբերի 21-ից Հունգարիան դարձավ Շենգենյան տարածաշրջանի անդամ: Գործնականում դա նշանակում է հետևյալը.

- Շենգենյան պետություններից որևէ մեկի կողմից տրված վիզաները և կացության թույլտվությունները գործում են նաև Հունգարիայում
- Հունգարիայի օտարերկրյա ներկայացուցչությունների կողմից տրված վիզաները և Հունգարիայի ազգային իշխանությունների կողմից տրված կացության թույլտվությունները գործում են նաև Շենգենյան ողջ տարածքում:

Վիզայի պիտակի վրա, որը նույնն է Շենգենի բոլոր պետությունների համար, գրված է՝ «Վավեր է բոլոր Շենգենյան պետությունների համար»: Շենգենյան վիզայի և մուտքի կանոնակարգերը կիրառելի են ոչ ավելի քան 90 օր մնալու համար: 90 օրվանից ավելի մնալու համար գործող կանոններն ամրագրված են ԵՄ անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ:

### Վիզայի տեսակները

<u>Օդանավակայանի տարանցիկ վիզա - A</u>
Այս վիզայով օտարերկրացիներին հնարավորություն է տրվում մնալ օդանավակայանի միջազգային տարանցիկ տարածքում՝ կապակցող թռիչքին սպասելու համար, սակայն չի թույլատրվում մուտք գործել այդ երկիր:

Տարանցիկ վիզա - B
Այս վիզայով մի երկրից մյուսը ճամփորդող օտարերկրացուն հնարավորություն է տրվում տարանցում կատարել Շենգենյան տարածքով: Տարանցիկ վիզան կարող է տրվել միայն այն դեպքում, երբ օտարերկրացին ապացուցում է, որ թույլտվություն ունի Շենգենյան տարածքում մնալուց հետո մուտք գործել հաջորդ` թիրախային երկիրը: Տարանցիկ վիզան կարող է տրվել մեկ կամ կրկնակի տարանցման, իսկ բացառիկ դեպքերում` բազմակի տարանցման համար, պայմանով` որ որևէ տարանցում տվյալ երկրով չգերազանցի վիզայի պիտակի վրա մնալու տևողության հատվածում նշված օրերի թիվը: Օրենքի համաձայն, տարանցման վիզաները 5 օրից ավելի չեն լինում:

Կարճաժամկետ վիզա - C
Այս վիզայով օտարերկրացուն թույլատրվում է Շենգենյան տարածք մուտք գործել և մնալ զբոսաշրջության, բիզնեսի, անձնական կամ այլ այցելությունների կամ համանման նպատակներով: Կարճաժամկետ վիզա կարող է տրվել տվյալ երկիր մեկանգամյա, կրկնակի կամ բազմակի մուտքերի համար, ընդ որում ո՛չ մեկանգամյա չընդհատված այցելությունը և ո՛չ էլ հաջորդական մի քանի այցելությունների ընդհանուր տևողությունը չի կարող վեցամսյա ժամանակահատվածում անցնել 90 օրվանից` սկսած առաջին մուտքի օրվանից: Այժմ անվճար վիզա կարող են ստանալ դիմորդների բազմաթիվ կատեգորիաներ (տվյալ երկրի իրավաբանորեն ռեզիդենտ քաղաքացիների ընտանիքների անդամները, ուսանողներ և թոշակառուներ, լրագրողներ և այլն): Մարդկանց որոշակի կատեգորիաների համար, օրինակ` գործարարների, ուսանողների և լրագրողների համար, կկիրառվեն փաստաթղթերի պարզեցված պահանջներ: Հաճախակի ճամփորդողների որոշակի կատեգորիաների (այդ թվում` գործարարներ, լրագրողներ, ուսանողներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ) կտրվեն բազմակի մուտքի վիզաներ, որոնց վավերությունը կլինի երկարաժամկետ, իսկ դիվանագիտական անձնագրեր ունեցողները կազատվեն վիզա ունենալու պարտավորությունից:

## Եթե որոշում եք Հունգարիայում մնալ 90 օրից ավելի

Երկարատև մնալու համար (90 օրից ավելի), առաջին հերթին անհրաժեշտ է ներկայացնել կացության թույլտվության դիմում: Ձեր դիմումին ընդառաջելու դեպքում կստանաք վիզա, որով ձեզ կթույլատրվի մեկանգամյա մուտք կացության թույլտվություն ստանալու և 30 օր առավելագույն ժամկետով Հունգարիայում մնալու համար:

## 2. Ներգաղթ աշխատանքի նպատակով

**ա) օտարերկրյա աշխատողների մուտքի և մնալու պայմանները (այդ թվում՝ աշխատանքի թույլտվության և աշխատանքային վիզաների տեսակներ ու պահանջներ և պատասխանատու մարմիններ)**

Հունգարիայում աշխատելու համար ձեզ անհրաժեշտ է առաջին հերթին ձեռք բերել թույլտվություն համապատասխան «Կոմսության քաղաքային զբաղվածության գործակալությունից»: Դրա համար ձեզ անհրաժեշտ է գտնել գործատու, որը կցանկանա դիմել Ձեզ համար աշխատանքային թույլտվություն ստանալու նպատակով:

Այն պայմանները, որոնք ձեր գործատուն պետք է բավարարի Ձեզ համար աշխատանքային թույլտվություն ստանալու նպատակով՝

1. հաստատել, որ դուք իրեն անհրաժեշտ եք տվյալ աշխատանքի համար և այդ մասին տեղեկացնել աշխատանքային կենտրոնի գրասենյակ, որը Ձեզ կվերցնի աշխատանքի.
2. հաստատել, որ այդ աշխատատեղը չի կարող զբաղեցնել Հունգարիայի կամ Եվրոպական տնտեսական տարածաշրջանի անդամ պետության քաղաքացի:

Այն պայմանները, որոնք պետք է բավարարեք դուք՝

(Ա) դուք պետք է գրանցված լինեք որպես աշխատանք որոնող.

(Բ) դուք պետք է ունենաք տվյալ աշխատանքը կատարելու անհրաժեշտ որակավորում:

Եթե դուք և ձեր գործատուն բավարարում եք այս բոլոր պայմանները և դուք ձեռք եք բերում աշխատանքի թույլտվություն, ապա կարող եք կնքել աշխատանքային պայմանագիր:

Բացառություններ

Հունգարիայում աշխատանքի թույլտվության համար դիմելը պարտադիր չէ՝

(Ա) եթե դուք փախստական եք կամ օգտվում եք ժամանակավոր պաշտպանությունից, ինչպես նաև՝ եթե ունեք իմիգրացիոն կամ մշտական կացության թույլտվություն, առավել ևս՝ եթե.

(Բ) Եվրոպական տնտեսական տարածաշրջանի քաղաքացի եք:

Առավել մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Հունգարիայի Հանրային զբաղվածության ծառայության կայքէջը՝ http://en.afsz.hu/engine.aspx?page=en_full_home և Հունգարիայի հիմնական պորտալի աշխատանքի բաժինը http://www.magyarorszag.hu/english/keyevents/a_alpolg/a_munka/a_kulfoldiek/a_kulfmunkavall20071115.html

### բ) աշխատաշուկայի ոլորտներ, որտեղ աշխատուժի պակաս կա՝

- Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ
- Մանուֆակտուրային և գյուղատնտեսական արտադրություն

### գ) աշխատանք որոնելու կայքէջեր՝

www.jobmonitor.hu – JobMonitor
www.profession.hu - Profession
www.manpower.hu - Manpower Hungary
www.jobline.hu - JobOnline
www.CVonline.hu - CV Online
www.workania.hu - Workania.hu
www.monster.hu - Monster
www.europe.hobsons.com- Hobsons Student Service
http://europe.vault.com/index.jsp - Vault Europe
www.ihipo.com/ - iHipo (աշխատատեղեր և ինտերնատուրա՝ շրջանավարտների և երիտասարդ մասնագետների համար)
www.europerson.hu - Europerson (աշխատատեղերը հիմնականում Հունգարիայի քաղաքային շրջաններից դուրս գտնվող վայրերում են)
www.worktree.com/ - Worktree
http://www.summerjobs.com/do/where - Ամառային աշխատատեղեր
http://www.careersineurope.com/ - Կարիերա Եվրոպայում՝ շրջանավարտների և կարիերան նոր սկսած մասնագետների համար
http://www.expatriates.com/classifieds/hungary/jobs/ - Աշխատատեղեր օտարերկրացիների համար, ըստ եկրների

## 3. Ներգաղթ ուսանելու նպատակով

### ա) պայմաններ ուսանողների մուտքի և մնալու համար (ուսանողական վիզա, կացության թույլտվություններ, աշխատանքի իրավունք, եթե թույլատրվում է)

Եվրոպական տնտեսական տարածքին չպատկանող երկրներից եկող ուսանողները պարտավոր են իրենց ուսանողական վիզան ստանալ նախքան Հունգարիա ժամանելը: Խնդրում ենք ապահովել, որ ձեր անձնագիրն ուժի մեջ լինի առնվազն 18 ամիս, վիզայի համար ձեր դիմումը ներկայացրեք վաղօրոք: Ձեր վիզայի ձևակերպումը կարող է տևել մինչև 60 օր, թեև սովորաբար ձևակերպվում է 4 շաբաթվա ընթացքում: Այս կամ այն համալսարան ընդունված ուսանողը տվյալ

համալսարանից ստանում է **ընդունելության նամակ**՝ անգլերեն և հունգարերեն լեզուներով:
Խնդրում ենք վիզայի համար ձեր դիմումը հնարավորինս շուտ ներկայացնել ձեր երկրում Հունգարիայի դեսպանատուն կամ հյուպատոսարան: Եթե ձեր բնակության վայրում դեսպանատուն կամ հյուպատոսարան չկա, ձեր դիմումը կարող եք հանձնել Հունգարիայի պատվավոր հյուպատոսի: Դեսպանատների և հյուպատոսարանների ցանկը կարող եք գտնել հետևյալ կայքում՝
http://www.kulugyminiszterium.hu/kum/en/bal/missions/missions_abroad/
D5-ը բազմակի մուտքի ուսանողական վիզա է, որով վիզայի գործողության ժամկետի ընթացքում դուք կարող եք մուտք գործել և դուրս գալ Հունգարիայից որքան անգամ ցանկանում եք: Հունգարիայում մնալու առաջին տարվա ընթացքում ձեր ուսանողական վիզան պետք է փոխարինվի կացության թույլտվությամբ:

Ուսանողական վիզայի համար դիմելու համար ձեզ անհրաժեշտ է՝

1. Վիզայի դիմումի ձև (որը կարող եք ձեռք բերել Հունգարիայի հյուպատոսարանում կամ բեռնաթափել հետևյալ կայքէջից՝
http://www.kulugyminiszterium.hu/kum/en/bal/consular_services/Entry_of_Foreiners_to_Hungary/Visa_application_forms/

2. Անձնագիր (պետք է վավեր լինի առնվազն 18 ամիս, սակայն նախընտրելի է, որ ուժի մեջ լինի մինչև ձեր ուսումնառության վերջը).
4. Անձնագրային չափի երեք լուսանկար.
5. (Տարանցիկ վիզա, եթե անհրաժեշտ է).
6. Բանկի ստացական ուսման վարձի փոխանցման վերաբերյալ կամ Վճարման վկայագիր համալսարանից կամ միջազգային քոլեջից.
7. Վիզայի վճարը.
8. Դեսպանատունը կարող է պահանջել ձեր օդանավի տոմսի պատվերը կամ տոմսը.
9. Դեսպանատունը կարող է պահանջել ապացույց մնալու տեղի վերաբերյալ:

Կացության թույլտվություն

Հունգարիայում մնալու առաջին տարվա ընթացքում ձեր ուսանողական վիզան կրթության նպատակների համար պետք է փոխարինվի կացության թույլտվությամբ:
Կարդացեք Կացության թույլտվության վերաբերյալ բաժին 4-ը: Համոզվեք, որ ունեք (Ա) բոլոր անհրաժեշտ ընդհանուր փաստաթղթերը և (Բ) հետևյալ մասնավոր փաստաթղթերը՝

1. վկայական դպրոց հաճախելու վերաբերյալ.

2. փաստաթուղթ ուսանողական հանրակացարանում տեղ ունենալու մասին կամ վարձակալության պայմանագիր՝ սեփականատիրության իրավունքի վկայականի պատճենի հետ միասին.
3. փաստաթղթեր, որոնք վկայում են Հունգարիայում ձեր ապրուստի նվազագույն միջոցների մասին (բանկային հաշվի քաղվածք կամ ծնողների հայտարարություն այն մասին, որ ստանձնում են Հունգարիայում մնալու ձեր բոլոր ծախսերը կամ փաստաթուղթ կրթաթոշակի մասին).
4. Փաստաթուղթ դպրոցից այն մասին, որ դիմորդն ազատված է դպրոցական վճար մուծելուց կամ արդեն մուծել է ուսման վարձը:

<u>Հացեաքարտ</u>
Հունգարիա ժամանելուց հետո 15 օրվա ընթացքում դուք պետք է ձեր հունգարական հասցեն հայտնեք ձեր բնակության վայրի համայնքային գրասենյակ: Ձեզ անհրաժեշտ է ունենալ հունգարերեն լեզվով վարձակալության պայմանագրի բնօրինակը, սեփականատիրության իրավունքի վկայականը և տնային գրանցման լրացված պաշտոնական ձևաթուղթը (որն ապացուցում է ձեր բնակության վայրը Հունգարիայում)՝ ստորագրված տան սեփականատիրոջ կողմից: Տնային գրանցման ձևաթուղթը կարելի է անվճար ձեռք բերել Ներգաղթի և հպատակության գրասենյակից: Ինֆորմացիան տրամադրվում է գրանցման ժամանակ: Մեկ այլ բնակարան տեղափոխվելիս, դուք պետք է այդ մասին 3 օրվա ընթացքում հայտնեք թաղային իշխանություններին:
Ուսանողական վիզայի ընթացակարգերի մասին ավելի շատ տեղեկություն ունենալու համար այցելեք՝
http://www.studyhungary.hu/index.php?show=men&mid=23

## բ) Ուսանողական և ասպիրանտուրային կրթաթոշակներ

Կարելի է դիմել կրթաթոշակի հետևյալ հնարավորություններից օգտվելու համար՝
**Ա.** ուսանողական դասընթացներ (5-10 ամիս)
**Բ.** ասպիրանտական դասընթացներ (3-21 օր կամ 1-10 ամիս)
**Գ.1** դոկտորական հետազոտություններ (36 ամիս)
**Գ.2** մասնակի դոկտորական հետազոտություններ (12 ամիս)
**Դ.** հետդոկտորական հետազոտություններ (1-10 ամիս)
**Ե.** ավագ դասախոս կամ գիտաշխատող (3-21 օր կամ 1-10 ամիս)
**Զ.** ամառային դասընթացներ (2-4 շաբաթ)
Այս կրթաթոշակները թույլ են տալիս տրված ժամանակաշրջանում ուսանել կամ հետազոտական աշխատանք կատարել արվեստի ու գիտության ցանկացած բնագավառում: Կրթաթոշակները պետք է

ծախսվեն Հունգարիայի՝ նախապես որոշված որևէ հավատարմագրված բարձրագույն ուսումնական կամ գիտական հաստատությունում:
Այս սահմանափակումը վերաբերում է նաև հետազոտության համար հատկացվող կրթաթոշակներին: Ասպիրանտական դասընթացների, դոկտորական հետազոտության, հետդոկտորական, ինչպես նաև ավագ դասախոսական և գիտաշխատողների կրթաթոշակները կարող են երկարացվել միայն բացառիկ դեպքերում, ընդ որում միայն մեկ անգամ: Ուսանողական դասընթացների և դոկտորական հետազոտությունների կրթաթոշակները չեն երկարացվում:
Բալասի ինստիտուտի մասին ավելի մանրամասն տես՝
http://www.bbi.hu/index.php?id=99&cid=214

- ## Այլ կրթաթոշակներ

Կենտրոնական եվրոպական համալսարանն առաջարկում է զանազան կրթաթոշակներ ուսանողական և դոկտորական տարբեր ծրագրերի համար (քաղաքագիտություն, իրավունք, միջազգային հարաբերություններ և Եվրոպական հետազոտություններ, պատմություն, գենդերային հետազոտություններ, մաթեմատիկա, բնապահպանական հետազոտություններ և հանրային քաղաքականություն): Կարող եք դիմել անկախ ձեր քաղաքացիությունից:
http://www.ceu.hu և http://www.ceu.hu/admissions

## գ) հիմնական համալսարանների և քոլեջների ցանկ

Դրամայի և կինոյի ակադեմիա http://www.filmacademy.hu/
Ալբերտ Սենթ-Գիորգի բժշկական համալսարան
http://www.szote.u-szeged.hu/
Բուդապեշտի տնտեսական գիտությունների և հանրային վարչարարության համալսարան http://www.bke.hu/
Կենտրոնական եվրոպական համալսարան http://www.ceu.hu/
Գյուղատնտեսական գիտությունների Դեբրեցեն համալսարան
http://www.date.hu/
Բուդապեշտի Հայնալ Իմրե առողջապահական գիտությունների համալսարան http://www.hiete.hu/
Հունգարիայի արհեստների և դիզայնի ակադեմիա http://www.mif.hu/
Հունգարիայի գեղարվեստի ակադեմիա http://www.arts7.hu/
Հունգարիայի ֆիզիկական կուլտուրայի համալսարան
http://www.hupe.hu/
Բուդապեշտի Լիստ Ֆերենցի երաժշտական ակադեմիա
http://www.liszt.hu/
Բուդապեշտի տեխնիկական համալսարան http://www.bme.hu/

## դ) Օտարերկրյա ուսանողների ծրագրեր

- Բժշկական գիտությունների Սեմելվայս համալսարան http://www.sote.hu/

Սեմելվայս համալսարանի բժշկագիտության ֆակուլտետում առաջարկվում են միջազգային դասընթացներ՝ գերմաներեն և անգլերեն լեզուներով: Դիմումների ներկայացման և ընդունելության մասին տեղեկությունները կարելի է գտնել հետևյալ հասցեով՝ http://www.semmelweis-englishprogram.org/index.php?option=com_content&task=view&id=45&Itemid=66

- Ալբերտ Սենթ-Գիորգի բժշկական համալսարան http://www.szote.u-szeged.hu/aok/maine.htm

Բժշկագիտության ֆակուլտետը և Դեղագործական ֆակուլտետը օտարերկրյա ուսանողներին առաջարկում է անգլերեն և գերմաներեն լեզուների ուսուցման դասընթացներ: Դիմումների ներկայացման և ընդունելության մասին տեղեկությունները կարելի է գտնել հետևյալ հասցեով՝
http://www.szote.uszeged.hu/angoltit/?q=application_and_admission
Սեգեդի համալսարան, Հունգարական և Կենտրոնական Եվրոպայի միջազգային հետազոտությունների կենտրոն՝
http://www.arts.uszeged.hu/hungarianstudies/

Հունգարական հետազոտությունների կենտրոնը միջազգային ուսանողամետ ծրագիր է Սեգեդի համալսարանի ներսում, որն օտարերկրյա ուսանողներին առաջակում է հունգարական հետազոտություններ անգլերեն լեզվով:
Սեգեդի համալսարան, Եվրոպական հետազոտությունների կենտրոն՝ http://www2.u-szeged.hu/etk/e_index.html
Եվրոպական հետազոտությունների կենտրոնը տրամադրում է Եվրամիության մոդուլներ (համայնքային իրավունք, տնտեսական և քաղաքական ինտեգրում, ինստիտուցիոնալ համակարգի պատմություն և այլն) արդեն գոյություն ունեցող ուսանողական և ասպիրանտական մակարդակի վերապատրաստման ծրագրերի և մասնագիտացված ոլորտների շրջանակներում:

- Պեկս համալսարան

❑ Ընդհանուր բժշկության ֆակուլտետ՝ http://aok.pte.hu/index.php?&nyelv=eng

Դիմումների ներկայացման և ընդունելության մասին տեղեկությունները կարելի է գտնել հետևյալ հասցեով՝
http://www.admissions.medschool.pte.hu/index.php?cbsmodul=neztart&tartID=60

❑ Այլ ծրագրեր անգլերեն լեզվով՝

- Հումանիտար ֆակուլտետ՝ Բակալավրի կոչում հոգեբանությունից, անգլերեն լեզվով
- Բիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետ. Բիզնեսի կառավարում, Կիրառական մենեջմենթ
- Բիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետ. Բիզնեսի ծրագրեր, աստիճանի շնորհում
- Գիտությունների ֆակուլտետ
- Պոլակ Միհալի ճարտարագիտության ֆակուլտետ. ճարտարապետություն

Դիմումների ներկայացման և ընդունելության մասին տեղեկությունները կարելի է գտնել հետևյալ հասցեով՝
http://english.pte.hu/htmls/pte.php?s=236

Անասնապահության-անասնաբուժության համալսարան
http://www.univet.hu/

Սենթ Իսթվանի անասնապահության-անասնաբուժության համալսարանն առաջարկում է ուսանողական և դոկտորական ծրագրեր անգլերեն կամ գերմաներեն սովորել ցանկացող օտարերկրացիների համար: Դիմումների ներկայացման և ընդունելության մասին տեղեկությունները կարելի է գտնել հետևյալ հասցեով՝
http://www.univet.hu/english/education/defaultgrad.htm

❑ Իոթվոս Լորանդ համալսարան, http://is.itk.hu/mbs/ or www.elte.hu

ELTE-ն առաջարկում է անգլերեն լեզվով մի շարք կոչումների շնորհման դասընթացներ և դոկտորական ծրագրեր: Դիմումների ներկայացման և ընդունելության մասին տեղեկությունները կարելի է գտնել հետևյալ հասցեով՝
http://is.itk.hu/mbs/index.php?option=com_content&task=view&id=51&Itemid=64

❑ Բուդապեշտի տեխնոլոգիայի և տնտեսագիտության համալսարան, Կրթության միջազգային կենտրոն՝ http://tanok.bme.hu/

Կրթության միջազգային կենտրոնն առաջարկում է օտար լեզուներով ճարտարագիտական ծրագրեր Բուդապեշտի տեխնոլոգիայի և տնտեսագիտության համալսարանում: Կենտրոնը կատարում է դասախոսների և ուսանողների փոխանակման ծրագրեր, կոորդինացնում է միջազգային ուսանողների գրանցումը և կառավարում է մեկ տարով անցկացվող Նախաճարտարագիտական դասընթացը: Համալսարանը ծրագրեր ունի անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և գերմաներեն լեզուներով: Դիմումների ներկայացման և ընդունելության մասին տեղեկությունները կարելի է գտնել հետևյալ հասցեով՝
http://tanok.bme.hu/admission/

# 4. Կացության թույլտվությունը և հասցեաքարտը

## Կացության թույլտվությունը

Դուք կարող եք կացության թույլտվության դիմում ներկայացնել անմիջապես Ներգաղթի և հպատակության գրասենյակի շրջանային վարչությանը, եթե կարող եք ապացուցել՝

- ձեր դիմումի բացառիկ պատճառները, ի թիվս այլ պատճառների՝ ընտանիքի վերամիավորում կամ բուժում,
- որ ձեր մնալու պատճառը հետազոտական աշխատանքն է:

Ձեր կացության թույլտվությունն ուժի մեջ կլինի երկու տարի, որը հնարավոր է երկարացնել:

Ձեզ անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը՝

1. Ուժը չկորցրած անձնագիր (վավերությունը պետք է խնդրվող վիզայի ժամկետից ավել լինի առնվազն 3 ամսով).
2. Անձնագրի չափով 2 գունավոր լուսանկար (6 ամսից ոչ ավելի վաղեմության).
3. «Կացության թույլտվություն» ստորագրված դիմում (կարելի է բեռնաթափել Ներգաղթի և հպատակության գրասենյակի կայքէջից՝
http://www.bmbah.hu/ + English + Administration + Standard Forms);
4. Մնալու նպատակը հաստատող փաստաթղթեր.
5. Բնակարանի մասին հաստատող փաստաթղթեր.
6. Ապրուստի միջոցների մասին հաստատող փաստաթղթեր.
7. Առողջության ապահովագրություն (դուք պետք է ցույց տաք լիարժեք, բոլոր ռիսկերի համար առողջության ապահովագրության առկայությունը Հունգարիայում ձեր բնակվելու ամբողջ ժամանակաշրջանի համար):

Վարձատրվող գործունեության համար կացության թույլտվության համար ձեզ անհրաժեշտ է ունենալ հետևյալ փաստաթղթերը (ըստ ձեր մնալու նպատակի)՝

- աշխատանքի թույլտվություն,
- աշխատանքային պայմանագիր,
- Հունգարիայում զբաղվածությունը հաստատող փաստաթուղթ, և
- տեղեկանք այն մասին, թե ինչպես եք վաստակելու մինչև ձեր աշխատավարձն ստանալը (բանկային հաշվի քաղվածք, տեղեկանք գործատուից անձին կանխավճար տալու մասին և այլն)

կամ՝

- տեղեկանք, որը վկայում է ընկերության կողմից կատարվող շահութաբեր գործունեության մասին (ընկերության կանոնադրությունը),
- դատական մարմնի որոշումը ձեռնարկության գրանցման մասին,
- փաստաթուղթ Հունգարիայում բնակության տեղ ունենալու մասին,

- վկայական տվյալ պաշտոնում աշխատելու համար անհրաժեշտ որակավորման մասին,
- հայտարարագիր, տեղեկանք (ակնկալվող) տարեկան եկամտի մասին,
- տեղեկանք Հունգարիայում ձեր տրամադրության տակ եղած դրամական գումարի մասին,
- նախորդ տարվա պարզեցված տեսքով հաշվեկշռի թերթիկը (արդեն գործող ընկերության համար),
- տեղեկանք այն մասին, որ ընկերությունը հանրային պարտք չունի (արդեն գործող ընկերության համար),
- եթե ընկերությունն ունի հունգարացի աշխատողներ՝ նրանց աշխատանքային պայմանագրերը,
- նոր ձեռնարկության դեպքում՝ հակիրճ բիզնես պլան:

<u>Կրթական նպատակների համար կացության թույլտվության դեպքում.</u>
- վկայական դպրոց հաճախելու մասին,
- փաստաթուղթ ուսանողական հանրակացարանում տեղ ունենալու մասին կամ վարձակալության պայմանագիր, սեփականատիրության իրավունքի վկայականի պատճենը, և
- փաստաթղթեր, որոնք վկայում են Հունգարիայում ձեր ապրուստի նվազագույն միջոցների մասին (բանկային հաշվի քաղվածք կամ ծնողների հայտարարություն այն մասին, որ ստանձնում են Հունգարիայում մնալու ձեր բոլոր ծախսերը կամ փաստաթուղթ կրթաթոշակի մասին).
- փաստաթուղթ դպրոցից այն մասին, որ դիմորդն ազատված է դպրոցական վճար մուծելուց կամ արդեն մուծել է ուսման վարձը:
<u>Ընտանիքի վերամիավորման համար կացության թույլտվության դեպքում.</u>
- փաստաթուղթ Հունգարիայում բնակության տեղի մասին,
- փաստաթուղթ Հունգարիայում ապրուստի նվազագույն միջոցներ ունենալու մասին,
- ամուսնության վկայական / ծննդյան վկայական, և
- Հունգարացի ազգականի անձնագրի պատճենը:
<u>Այցելության նպատակով կացության թույլտվության դեպքում.</u>
- հրավերի պաշտոնական նամակ՝ ստորագրված նաև Ներգաղթի և հպատակության գրասենյակի կողմից կամ նոտարական փաստաթղթում ներառված հրավեր,
- հրավիրող կողմի միջին եկամտի մասին վկայող փաստաթուղթ,
- սեփականության իրավունքի վկայականի պատճենը, և
- հրավիրող կողմի անձնագրի կամ անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

Բուժման նպատակով կացության թույլտվության դեպքում.
- բուժում տրամադրող հաստատության անվանումը և հասցեն,
- տեղեկանք բուժման բնույթի և ակնկալվող տևողության մասին,
- տեղեկանք Հունգարիայում բուժման և մնալու ֆինանսական կողմի ապահովման մասին.
- տեղեկանք Հունգարիայում մնալու տեղի մասին, եթե հիվանդը բժշկական հաստատությունում չի մնում,
- օգնության կարիք ունեցող անչափահաս երեխայի կամ ընտանիքի անդամի դեպքում՝ տեղեկանք ընկերակցող անձի բնակության տեղի և ապրուստի նվազագույն միջոցների մասին:
Հետազոտական աշխատանքի համար կացության թույլտվության դեպքում.
- պայմանագիր հավատարմագրված գիտական հաստատության հետ
Կամավորական աշխատանքի համար կացության թույլտվության դեպքում.
- պայմանագիր հունգարական ընդունող հաստատության, կազմակերպության հետ (եկեղեցի, գրադարան, քաղաքապետարան և այլն):

Բնակության թույլտվության դիմումի վճարը 60 եվրո է: Որպես ընդհանուր կանոն, տարածաշրջանային տնօրինությունը դիմումին ընթացք է տալիս 30 օրվա ընթացքում: Եթե մուտքի նպատակը ուսումն է կամ հետազոտությունը, տնօրինությունները որոշումն ընդունում են 15 օրվա ընթացքում:
Հատուկ դեպքեր՝

- եթե կացությունն ուղղված է որոշակի ժամանակաշրջանում աշխատելու կամ եկամուտ վաստակելու այլ գործունեության, համապատասխան մարմինը կարող է կացության թույլտվության վավերությունը սահմանափակել աշխատանքի կամ տվյալ գործունեության իրականացման ժամանակաշրջանով.
- ուսանողների կացության թույլտվությունների վավերության ժամանաշրջանը նրանց սովորելու կամ մասնագիտական պրակտիկայի անցկացման ժամանակաշրջանն է, իսկ ավելի երկար սովորելու ժամանակաշրջանը մեկ տարի է, որը կարող է երկարացվել:

## Հասցեաքարտ (հասցեի տեղեկանք)

### Երբ է անհրաժեշտ ունենալ հասցեաքարտ և ինչ պետք է անել այն ստանալու համար

Դուք պետք է Հունգարիայում ձեր հասցեի մասին տեղեկացնեք ձեր ժամանումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, տրամադրելով հետևյալ տվյալները՝

- Անձնագիր, որի մեջ ձեր վիզան է
- Հասցեի գրանցման լրացված ձևաթուղթ՝ ստորագրված ձեր տանտիրոջ/ տանտիրուհու կողմից
- Վարձակալության պայմանագիր՝ հունգարերեն լեզվով ձեր տանտիրոջից/ տանտիրուհուց՝ ստորագրված երկու հունգարացի վկաների կողմից (բնօրինակը և մեկ պատճեն)
- Սեփականատիրության իրավունքի վկայականը (tulajdoni lap)՝ տրված վերջին երեք ամսվա ընթացքում: Երեք ամսից ավելի վաղ տրված տեղեկանքները վավեր չեն: Խնդրում ենք բնակարանի տանտիրոջից կամ բնակարանների վարձակալության գործակալությունից պահանջել այդպիսի տեղեկանք:
- Կացության թույլտվության համարը:

## Ուր պետք է գնալ այն ձեռք բերելու համար

Հասցեաքարտը կարելի է ձեռք բերել ձեր բնակության վայրի շրջանային նոտարական գրասենյակի փաստաթղթային բյուրոյից կամ էլ անկախ բնակության վայրից՝ **Հանրային կառավարման և էլեկտրոնային հանրային ծառայությունների գրասենյակից** (հունգարարեն՝ Kozigazgatasi es Elektronikus Kozszolgaltatasok Kozponti Hivatala = KEKKH):

1094 Budapest,
Balazs Bela utca 35.
1450 Budapest, Pf.: 81.
Հեռ.՝ 0036 (1) 455-6700
Ֆաքս՝ 0036 (1) 455-6875
Էլ-փոստ՝ nyilvantarto.hivatal@mail.ahiv.hu
Կայքէջի հասցեն՝
http://www.nyilvantarto.hu/kekkh/kozos/index.php?k=nyitolap_en&b=bal_en g
Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝
http://www.magyarorszag.hu/english/keyevents/a_alpolg/a_okmany20050822/a_azon20050822/a_szemaz20080313.html

# 5. Ապաստանի ընթացակարգ

Ապաստանի ընթացակարգի մասին մանրամասների համար տես Ներգաղթի և հպատակության գրասենյակի կայքէջը՝
http://www.bmbah.hu/index.html + English + Administration + Procedure + New Asylum Applicants)

Ընթացակարգին պետք է մասնակցել անձամբ: Ձեր փաստաբանը կամ ներկայացուցիչը չեն կարող մենակ ներկայանալ ձեր գործի վարույթում: Ձեր իրավաբանական կամ այլ ներկայացուցիչը (ընտանիքի անդամ, ազգական, իրավաբանական ներկայացուցիչ) կարող են ձեզ հետ միասին ներկա գտնվել վարույթին, եթե դուք դիմում եք դրա համար: Ձեր գործը լսվում է ձեր մայրենի լեզվով (կամ ձեր իմացած որևէ այլ լեզվով) խոսող թարգմանչի օգնությամբ: Վարույթի ժամանակ դուք իրավունք ունեք խոսել ձեր մայրենի լեզվով կամ ձեր իմացած ցանկացած այլ լեզվով: Փախստականի ձեր կարգավիճակի որոշման գործընթացի ժամանակ դուք պարտավոր եք համագործակցել իշխանությունների հետ: Դուք պարտավոր եք անցնել բժշկական քննություն, բուժում և լրացնել պարտադիր համարվող ցանկացած պատվաստում, որ չեք ստացել: Փախստականի կարգավիճակի որոշման գործընթացի ժամանակ ձեզ կտրվի կացության հումանիտար թույլտվություն:

Դուք պարտավոր եք բնակվել Ընդունելության կենտրոնում կամ փախստականների գործերով զբաղվող մարմնի կողմից ձեզ համար նշանակված որևէ այլ վայրում և հետևել նշանակված բնակության վայրում գործող վարքի կանոններին: Եթե չեք ցանկանում մնալ գրասենյակի բնակության վայրում, ընթացակարգով զբաղվող մարմինը կարող է ձեզ թույլատրել բնակվելու մեկ այլ վայրում:

Դուք չեք կարող աշխատել ձեր դիմումը ներկայացնելուց հետո մեկ տարի ժամանակ, բացի Ընդունելության կենտրոնում աշխատելուց, որից հետո կարող եք աշխատել օտարերկրացիների զբաղվածության վերաբերյալ դրույթներին համապատասխան:

Փախստականների հարցերի լիազոր մարմինը ձեր գործով որոշում կընդունի 60 օրվա ընթացքում: Որոշումը ձեզ կհաղորդվի գրավոր և բանավոր կներկայացվի ձեր մայրենի լեզվով (կամ ձեր իմացած այլ լեզվով): Փախստականների հարցերի լիազոր մարմինը կհաստատի կամ կմերժի դիմումը: Եթե դուք համաձայն չեք փախստականների հարցերի լիազոր մարմնի որոշմանը, կարող եք դիմել դատական կարգով այն բողոքարկելու համար: Բողոքարկումն անվճար է: Դատական մարմնի բողոքարկման համար հայցը ներկայացվում է փախստականների հարցերի լիազոր մարմնի անցկացրած վարույթից հետո 15 օրվա ընթացքում: Այդ մարմինը ձեր հայցը և ձեր գործին առնչվող փաստաթղթերն անմիջապես կուղարկի Բուդապեշտի դատարան, որը հայցի վերաբերյալ որոշում կընդունի այն ստանալուց հետո 15 օրվա ընթացքում: Դատարանը կլսի ձեզ անձամբ:

# 6. Ընտանիքի վերամիավորում

Ընտանիքի վերամիավորման վիզան տրվում է այն անձանց, ովքեր օգտվում են պատշաճ բնակարանից և դրա շահագործումից, Հունգարիայում մնում են օրինական կարգով և ունեն ընտանիքի մերձավոր անդամ, որը Հունգարիայի քաղաքացի է, փախստական կամ օտարերկրացի, որը մշտական բնակություն ունի երկրում:
Նախ և առաջ, դուք պետք է դիմեք ընտանիքի վերամիավորման համար: Կարդացեք Բնակության թույլտվության բաժին 5-ը: Համոզվեք, որ ունեք (Ա) բոլոր պահանջվող փաստաթղթերը և (Բ) հետևյալ մասնավոր փաստաթղթերը՝
- փաստաթուղթ Հունգարիայում բնակության տեղի մասին,
- փաստաթուղթ Հունգարիայում ապրուստի նվազագույն միջոցներ ունենալու մասին,
- ամուսնության վկայական,
- ծննդյան վկայական, և
- Հունգարացի ազգականի անձնագրի պատճենը:

# 7. Առողջապահության համակարգ

Առողջապահական ապահովագրությունից օգտվելը կատարվում է ապահովագրական հարաբերությունների հիման վրա, հաշվի առնելով սահմանված ավանդային վճարումները: Ո՞վքեր են ավտոմատ կերպով ապահովագրվում առողջապահության համակարգում:
Ըստ հունգարական կամ ԵՄ կանոնակարգերի, եթե դուք դասակարգված եք որպես ապահովագրված, կարող եք օգտվել Հունգարիայում հանրային առողջապահության համակարգի ծառայություններից: Դուք ավտոմատ կերպով ապահովագրված եք, եթե դուք՝
• աշխատող եք կամ ունեք աշխատանքի կատարմանն ուղղված այլ իրավական հարաբերություն,
• ուսանող եք,
• ստանում եք գործազրկության նպաստ,
• կատարում եք ձեռնարկատիրական աշխատանք և
• հոգևորականության անդամ եք:

<u>Առողջապահական ապահովագրություն</u>
Ամեն ոք, անկախ քաղաքացիությունից, ենթակա է պարտադիր ապահովագրման, հետևաբար ապահովագրվում և կարող է օգտվել առողջության ապահովագրական նպաստներից աշխատանքի անցնելու առաջին օրվանից սկսած:

Ապահովագրված անձինք (ավանդ վճարողները) և նրանք, ովքեր իրավունք ունեն օգտվել առողջապահական ծառայություններից (թոշակառուներ, ուսանողներ, խնամառու ազգականներ), կարող են առաջին իսկ օրվանից և անկախ քաղաքացիությունից, օգտվել բոլոր տեսակի առողջապահական ծառայություններից ցանկացած ծառայությունում, որը պայմանագիր ունի Ազգային առողջության ապահովագրական հիմնադրամի հետ:

<u>Առողջապահական նպաստներ սոցիալական ապահովագրական համակարգի անդամների համար</u>

## Նպաստներ ծառայությունների համար

• Տարիքին համապատասխան, ամեն ոք իրավունք ունի օգտվելու մի շարք ստուգումներից (օրինակ, անվճար կարգով՝ ատամների ստուգում երեխաների համար, թոքերի և քաղցկեղի սքրինինգ):
• Ընտանեկան բժշկի ծառայություններ (թերապևտիկ ստուգումներ և խորհրդատվություն, բուժում, վաստակելու կարողության գնահատում և այլն):
• 18 տարին չլրացրած կամ 60-ից անց քաղաքացիներն իրավունք ունեն օգտվել ատամների անվճար բուժումից, իսկ տարիքից անկախ՝ ամեն ոք իրավունք ունի օգտվել ատամնաբուժական ստուգումից:
• Հիվանդության դեպքում ապահովագրված կողմը կարող է օգտվել ստուգումներից և բուժումից:
• Ամեն ոք իրավունք ունի օգտվել հիվանդանոցային ծառայություններից (այսինքն՝ հիվանդանոց պառկել)՝ բուժման, դեղերի, խնամքի և ուտելիքի տրամադրումով:
• Հղի կանայք կարող են պահանջել հղիության խնամք և ծննդաբերության ծառայություններ և օրենքով սահմանված որոշակի դեպքերում՝ հղիության արհեստական ընդհատում:

## Ֆինանսական նպաստներ

• Ապահովագրվածները կարող են 24 շաբաթվա համար ստանալ հղիության և նախածննդյան ու ծննդյան նպաստ, որը կազմում է օրական միջին աշխատավարձի 70%-ը:
• Հիվանդության վճար կարող է ստանալ ամեն ոք, ով ապահովագրման ժամանակաշրջանի ընթացքում կամ դրա դադարումից հետո առաջին, երկրորդ կամ երրորդ օրը դառնում է անաշխատունակ (հիվանդության կամ հղիության պատճառով) և վճարում է բժշկական ապահովագրության ավանդները: Առողջապահական նպաստների մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել՝ http://en.afsz.hu/resource.aspx?ResourceID=en_living_and_working_in_hungary, էջ 28

# 8. Սոցիալական ապահովագրության համակարգ

Ա) Հղիության և նախածննդյան ու ծննդյան նպաստը տրվում է ցանկացած կնոջ, որը ապահովագրված է 180 օր ծննդաբերելուց առաջ երկու տարվա ընթացքում և որը ծննդաբերում է ապահովագրության ժամանակաշրջանում կամ ապահովագրության դադարեցումից հետո 42 օրվա ընթացքում կամ որը ծննդաբերում է ապահովագրության դադարեցումից ավելի քան 42 օր  հետո, եթե նշված օրերը համընկնում են հիվանդության կամ պատահարի հետևանքով անաշխատունակության վճարման ժամանակաշրջանի լրացուցիչ 28 օրվա ընթացքի հետ:

Հղիության և նախածննդյան ու ծննդյան նպաստը տրվում է մայրության արձակուրդի ժամանակաշրջանի համար, որը ըստ Աշխատանքային օրենսգրքի 24 շաբաթ է: Այդ ժամանակահատվածի չորս շաբաթն ընկնում է նախքան ծննդաբերության սպասված օրը: Հղիության և նախածննդյան ու ծննդյան նպաստը կազմում է օրական միջին աշխատավարձի 70%-ը:

Բ) Հաշմանդամության նպաստ
Ապահովագրված անձինք կարող են ստանալ հաշմանդամության նպաստ, եթե՝
• առողջության վատթարացման կամ ֆիզիկական կամ մտավոր վատթարացման հետևանքով կորցրել են աշխատունակության առնվազն 67%-ը և մեկ տարի այդ վիճակի բարելավում չի ակնկալվում,
• մշտական աշխատանք չունեն կամ որոնց աշխատավարձը էապես ավելի ցածր է, քան նախքան հաշմանդամ դառնալն ստացած աշխատավարձը: Աշխատավարձը համարվում է էապես ցածր, եթե այն նախքան հիվանդությունն ստացած աշխատավարձի 80%-ից պակաս է:

Գ) Տարիքավորության ապահովագրություն
Հունգարիայում պարտադիր կենսաթոշակային ապահովագրության շրջանակներում գործում է այսպես կոչված խառը երկաստիճան համակարգ: Աստիճան I-ը գործում է աշխատանքային ծառայության ընթացքում կատարվող վճարումների միջոցով և կազմում է մոտավորապես 3/4 մասը:
Աստիճան II-ը մասնավոր թոշակային համակարգ է, որը գործում է ավանդների վրա հիմնված կապիտալ ֆոնդերի սկզբունքով և մասնավոր թոշակային ֆոնդերի կազմակերման շրջանակներում և կազմում է տրամադրվող բոլոր թոշակային ծառայությունների մոտավորապես 1/4 մասը: Կենսաթոշակային երկաստիճան համակարգը, որը մշակվել է պարտադիր ապահովագրական համակարգի շրջանակներում, լրացվում է նաև աստիճան III-ով, որն իրականացվում է 1993թ. մեկնարկած տարեցների խնայողությունների կամավոր փոխադարձ

կենսաթոշակային ծրագրերի համակարգով և պետության կողմից խրախուսվում է հարկային նպաստների միջոցով: Հունգարիայում պարտադիր կենսաթոշակային ապահովագրությունը տարածվում է ապրուստ վաստակող յուրաքանչյուր քաղաքացու վրա, անկախ իրավական այն ձևից, որով կազմակերպվում է տվյալ գործունեությունը:

Դ) Ընտանեկան նպաստներ
Հունգարիայում կա ընտանեկան նպաստների մեծ շարք, և ըստ եվրոպական ստանդարտների, բարձր են: Ստորև թվարկված են Հունգարիայում ընտանեկան նպաստների հիմնական տեսակները՝
o Երեխայի խնամքի նպաստ
o Երեխայի պաշտպանության կանոնավոր սուբսիդիա
o Երեխայի պաշտպանության բացառիկ սուբսիդիա
o Ընտանեկան հավելավճար
o Երեխայի խնամքի օժանդակություն
o Երեխային մեծացնելու սուբսիդիա
o Մայրության սուբսիդիա

Ե) Գործազրկության նպաստներ
Գործազուրկ անձանց հատկացվում է երկու տեսակի նպաստ՝
o Աշխատանք փնտրողի նպաստ, որը շնորհվում է աշխատանք փնտրող այն անձին, որը աշխատանք փնտրող դառնալուն նախորդած չորս տարիներին աշխատել է առնվազն 365 օր և աշխատանք գտնելու ցանկություն ունի, սակայն ո՛չ նա և ո՛չ էլ զբաղվածության տեղական կենտրոնը չեն կարողանում նրա համար համապատասխան աշխատանք գտնել:
o Օգնություն աշխատանք փնտրողին. աշխատանք փնտրողի կողմից դիմում ներկայացնելու դեպքում նրան շնորհվում է աշխատանք փնտրողի օգնություն: Այդպիսի օգնությունը բաղկացած է հետևյալից՝
o Վերապատրաստման դասընթաց
o Աշխատանքի ինտենսիվ որոնման սուբսիդիա
o Աջակցություն գործազուրկին ձեռներեց դառնալու համար
o Ինքնազբաղվածության սուբսիդիա:

## 9. Բնակարաններ

Բնակարանների օգտակար վեբկայքեր՝
www.ingatlan.com
www.ingatlan.lap.hu
lakas.lap.hu
www.alberlet.hu

www.alompalota.hu
www.ingatlankereso.hu
www.degaz.hu
www.demasz.hu
vizmu.lap.hu
www.matav.hu
kabel.lap.hu

## 10. Միգրանտներին առաջարկվող աջակցության ծառայություններ

**Ներգաղթի և հպատակության գրասենյակ (OIN) (Bevándorlási és Állampolgársági Hivatal)**
http://www.bm-bah.hu/
Հունգարիայում օտարերկրացիների մուտքի և մնալու, կացության թույլտվությունների բոլոր հարցերի և փախստականների հարցերի համար պատասխանատու պետական մարմինը հանդիսանում է`

**Հունգարիայի Հանրապետությունում**
**Հայաստանի Հանրապետության դեսպանատուն,**
**Ռեզիդենցիան` Վիեննա**
**Ավստրիայի Հանրապետությունում**
**Հայաստանի Հանրապետության դեսպանատուն**
Hadikgasse 28, A-1140, Vienna, Austria
Հեռ.` (43 1) 5227479 (43 1) 5243668 (հյուպատոսական)
Ֆաքս` (43 1) 5227481
Էլ-փոստ` armenia@armembassy.at

**Կորդելիա հիմնադրամ** - http://www.cordelia.hu
Կորդելիա հիմնադրամն առաջարկում է հոգեբուժական և հոգեսոցիալական խնամք աշխարհի բոլոր կողմերից եկած կտտանքներից տուժածներին և կազմակերպված բռնությունից այլ լուրջ տրավմաների ենթարկվածներին: Կորդելիայի թիմը կազմված է հոգեբույժներից, թերապևտներից, սոցիալական աշխատողներից և թարգմանիչներից: Հիմնադրամի հիմնական գործը Հունգարիայի ընդունման կենտրոններում բնակվող կտտանքներից տուժածներին ուղղակի օգնություն ցուցաբերելն է:

Կորդելիա հիմնադրամ, 37. Balzac str, H-1136 Budapest, հեռ.` +36-1-349-14-50, ֆաքս` +36-1-239-13-32

**Հունգարիայի Հելսինկյան հանձնաժողով -**
http://www.helsinki.hu/eng/indexm.html
Հունգարիայի Հելսինկյան հանձնաժողովը իրավական պաշտպանություն է տրամադրում պետական իշխանությունների կողմից թույլ տրված մարդու իրավունքների չարաշահումներից տուժածներին և հանրությանը տեղեկացնում է մարդու իրավունքների խախտումների մասին:
Հունգարիայի Հելսինկյան հանձնաժողով՝
1054 Budapest, Bajcsy-Zsilinszky st 36-38,
հեռ.՝ +36 1 321 4141, +36 1 321 4323, ֆաքս՝ +36 1 321 4327,
էլ-փոստ՝ Helsinki@mail.datanet.hu

**Հունգարական Կարմիր խաչի ընկերություն**
Հասցեն՝ Arany János utca 31, 1051 Budapest V
Փոստային հասցեն՝ Magyar Vöröskereszt 1367 Budapest 5, Pf. 121
Հեռ.՝ (36) (1) 374-1338 / 374-1321 (Միջազգային բաժին)
Ֆաքս՝ (36) (1)374-1312
Հեռագիր՝ RED CROSS BUDAPEST
Էլ-փոստ՝ intdept@redcross.hu
Վեբկայք՝ http://www.redcross.hu

**Մենեդեկ** - http://www.menedek.hu/
Մենեդեկը միգրանտների հունգարական ասոցիացիան է: Ասոցիացիայի հիմնական խնդիրներն են՝
- ներկայացնել միջազգային միգրանտներին (Հունգարիայում ապաստան որոնողներ, փախստականներ, ժամանակավորապես պաշտպանվող անձինք, օտարերկրյա աշխատողներ, իմիգրանտներ և այլ օտարերկրացիներ) հասարակության մեծամասնությանը.
- նպատակային ծրագրերի միջոցով խթանել այն փախստականների ու միգրանտների սոցիալական և մշակութային ինտեգրումը, որոնք ծրագրում են մնալ Հունգարիայում.
- ներկայացնել միգրանտների շահերն ու իրավունքները քաղաքական, վարչական, կառավարական և համայնքային մարմիններում ու լրատվամիջոցներում:
Մենեդեկ, 1077 Budapest, Josika street 2, հեռ.՝ +36 (1) 322 1502, +36 (1) 344 6224, ֆաքս՝ +36 (1) 479 0272

**Միգրացիայի միջազգային կազմակերպություն** – http://www.iom.hu
Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (IOM) միգրացիայի ասպարեզի գլխավոր միջկառավարական կազմակերպությունն է: Հունգարիայում այդ կազմակերպությունն իրականացնում է Կամավոր վերադարձի աջակցման ծրագիր, որից օգտվում են անհաջողության մատնված ապաստան որոնողները և անկանոն միգրանտները:

IOM Բուդապեշտ, Կենտրոնական և Հարավարևելյան Եվրոպայի տարածաշրջանային առաքելություն,
Revay str. 12, Budapest 1065,
Հեռ.՝ +36.1.4722500, ֆաքս՝ +36.1.3740532,
էլ-փոստ՝ mrfbudapest@iom.int

**Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների Գերագույն հանձնակատար** - http://www.unhcr-budapest.org/hungary/index.php
Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների Գերագույն հանձնակատարի գրասենյակի առաքելությունը միջազգային գործողության առաջնորդումն ու կոորդինացնումն է՝ փախստականներին պաշտպանելու և փախստականների խնդիրներն ամբողջ աշխարհում լուծելու համար:

Դրա առաջնային նպատակը փախստականների իրավունքների և բարեկեցության երաշխավորումն է: Գերագույն հանձնակատարը ձգտում է ապահովել, որ յուրաքանչյուր ոք կարողանա օգտվել ապաստան որոնելու իրավունքից և ապահով ապաստան գտնել մեկ այլ պետության ներսում, հնարավորություն ունենալով կամավոր տուն վերադառնալու, տեղում ինտեգրվելու կամ երրորդ երկրում վերաբնակվելու համար:

UNHCR Hungary, 1022 Budapest, Felvinci ut 27, հեռ.՝ +361 336 30 60, ֆաքս՝ +361 336 3080, էլ-փոստ՝ hunbu@unhcr.org

**Թեժ հեռախոսային գիծ ընտանեկան բռնությունից կամ թրաֆիքինգից տուժածների համար (24/7)**
Հունգարիայում՝ 06-80/20-55-20
Արտասահմանում՝ 0036 80/20-55-20

## 11. Քաղաքացիության/հպատակության ձեռք բերում

Հունգարիան չի պահանջում Հունգարիայի քաղաքացիություն ընդունելու համար հրաժարվել ձեր ընթացիկ քաղաքացիությունից: Հունգարիայի քաղաքացի դառնալու համար սպասելու ձեր ժամանակը տարբեր է՝ կախված տարբեր հանգամանքներից: Ընդհանրապես, Հունգարիայի քաղաքացիության համար կարող եք դիմել այն բանից հետո, երբ օրենքով սահմանված կարգով երկրի ներսում ապրել եք 8 տարի անընդմեջ: Եթե դուք ծնվել եք Հունգարիայում, բայց երբևէ չեք ապրել երկրում, դուք կարող եք դիմել քաղաքացիություն ստանալու համար Հունգարիայում օրենքով սահմանված կարգով 5 տարի անընդմեջ ապրելուց հետո: Եթե ամուսնացած եք Հունգարիայի քաղաքացու հետ կամ հունգարացի երեխայի ծնող եք, ձեզ թույլատրվում է

քաղաքացիության համար դիմել Հունգարիայում օրենքով սահմանված կարգով 3 տարի անընդմեջ ապրելուց հետո: Եթե դուք կարող եք հաստատել, որ ձեր նախնիները հունգարացի են, ապա քաղաքացիության համար կարող եք դիմել կացության թույլտվություն ստանալուն պես: Հունգարիայում քաղաքացիության համար դիմում ներկայացնելու համար նախ հարկավոր է բավարարել մի քանի պահանջ: Հունգարիայի քաղաքացիության համար դիմելու և այն ստանալու համար անհրաժեշտ է ունենալ կացության թույլտվություն, քրեական մաքուր անցյալ ինչպես Հունգարիայում, այնպես էլ ձեր երկրում, ապացույց օրենքով սահմանված և վավեր բնակության տեղի մասին. միաժամանակ դուք պետք է քննություն հանձնեք, որով կստուգվի ձեր իմացությունը սահմանադրական հիմնարար դրույթների վերաբերյալ: Այդ քննությունը հիմնականում քաղաքացիության քննությունն է և պետք է հանձնվի պաշտոնական լեզվով, որը հունգարերենն է: Դուք պետք է ձեր դիմումը անձամբ հանձնեք Տեղական խորհրդի ռեգիստրին: Դուք այն ինքներդ պետք է տանեք և ներկայացնեք ռեգիստր, քանի որ ուրիշ ոչ ոք դա չի կարող անել ձեր փոխարեն: Եթե այնպես պատահի, որ երբ արդեն պատրաստ եք Հունգարիայի քաղաքացիության համար դիմում ներկայացնել, սակայն գտնվում եք Հունգարիայի սահմաններից դուրս, կարող եք ձեր դիմումը ներկայացնել ամենամոտ գտնվող հունգարական հյուպատոսությունը:

**Վարչական մարմնի հասցեն՝**
Միգրացիայի և քաղաքացիության գրասենյակ (Bevandorlasi es Allampolgarsagi Hivatal)
Քաղաքացիության գրասենյակ (Allampolgarsagi Igazgatosag)
1903 Budapest Pf. 314
էլ-փոստ՝ apf@bah.b-m.hu

**Հաճախորդների ծառայություն**
Budapest XI., Budafoki ut 60. Sztregova koz II +(36)(1)4639102
Աշխատանքի ժամերը՝ քաղաքացիության հարցերի համար (Allampolgarsagi ugyekben)՝
Երեքշաբթի՝ 8.30-12.00 և 13.00-16.00
Չորեքշաբթի՝ 8.30-12.00
Երեխայի ծննդյան հարցերի համար (Hazai anyakonyvezesi ugyekben)՝
Երկուշաբթի՝ 8.30-12.00
Չորեքշաբթի՝ 13.00-16.00
Հինգշաբթի՝ 8.30-12.00